ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №-Ա

«ՋԻ ԹԻ ԲԻ ԱՆՀԱՂԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի փետրվարի 24-ի №04/11.1/1396-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի №25 հասցեում գտնվող շինհրապարակում, որտեղ գործունեություն է իրականացնում «ՋԻ ԹԻ ԲԻ Անհաղթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), հայտնաբերվել են առանց թույլտվության 450,025ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող ռադիոկայաններ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 24-ի №ՍԾ/34.2-Մ2-9/785-2025 գրությունը, որին ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ ռադիոկայանները այլևս չեն շահագործվում,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Ընկերության գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 450,025ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 450,025ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2025թ.